Արձանագրություն 3

«ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Աբովյան համայնքի կարիքների համար անվանատախտակներ ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Աբովյան

06.06.2022 թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ Ա.Չոբանյան
Անդամներ՝ Ջ. Սարգսյան,Ս.Չիտչյան,Լ. Իսահակյան
Քարտուղար՝ Ա. Ծատուրյան

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով գնման ընթացակարգի մասին համառոտ տեղեկատվություն.

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա.Չոբանյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների e-AUCTION(https://eauction.armeps.am/ կայքի) համակարգի միջոցով: Հակադարձ աճուրդի նիստը տեղի է ունեցել 02.06.2022 թվականին ժամը 10:30-ին, Աբովյանի համայնքապետարան ք. Աբովյան Բարեկամության հր. 1 հասցեում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել,այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ – 0:

2. Գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա.Չոբանյան)

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների հասցեները	Մասնակիցների հեռախոսահամարները
1	«ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ»	Ավան,Հ.Հովհաննիսյան 24/7	+374 44 75 54 55

	ՍՊԸ		
2	«ԱՏԱ» ՍՊԸ	Երևան, Մալխասյանց 25	+374 91 43 20 71

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ – 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա.Զոբանյան)

3.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Գնառաջարկներ							
Զափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	<<ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ>>ՍՊԸ	910000,00	758333,00	151666,60	909999,60	
1	2	<<ԱՏԱ>> ՍՊԸ	910000,00	1950000,00	0,00	1950000,00	Մերժված

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ – 0:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա.Զոբանյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,բացառությամբ «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հավելված 1՝ դիմում-հայտարարության մեջ բացակայում է հայտը ներկայացնողի ստորագրությունը և չի ներկայացվել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/հավելված 1.2/,ինչպես նաև կցված չէ ապրանքի տեխնիկական բնութագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը կասեցրել է նիստը և առաջարկել փաստաթղթերի շտկված տարբերակը կցել eAuction համակարգում օրենքում սահմանված ժամկետում/մինչև 03.06.2022թ. ներառյալ/:

4.2 «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը և փաստաթղթերի շտկված տարբերակները չեն կցվել e-AUCTION (https://eauction.armeps.am/) համակարգ:

4.3 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ		Ա. Չոբանյան
Անդամներ		Ջ. Սարգսյան
		Ս. Չիտչյան
		Լ. Իսահակյան
Համակարգող		Ա. Ծատուրյան